«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/458

«29» 03 2024թ.

**«ԱԳԱՍՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մուրադյան,

Համաձայն 2024 թվականի հունվարի 15-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Ագաստ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված դեղորայքի գնման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» պայմանագրի Ձեր ընկերությունը պարտավորվել է Համալսարանի կողմից համապատասխան պահանջի առկայության դեպքում 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ պահանջված քանակով:

Ըստ փետրվարի 12-ի ներկայացված թիվ 1, 2, 3 պահանջների թիվ 72, 73, 74 չափաբաժինների մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մարտի 2-ին: Սահմանված ժամկետում որևէ մատակարարում չստանալով և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» պայմանագրի 2.1.1. կետով /այն է, որ մատակարարման ժամկետը 10 օրից ավել խախտվելու դեպքում գնորդը կարող է հրաժարվել ապրանքից/՝ մարտի 12-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ տրամադրվել է մատակարարման նոր՝ 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ, մատակարարումներն իրականացնելու համար, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստով:

Մարտի 15-ին Ձեր կողմից մատարակարվել են պահանջված դեղամիջոցները, որոնք, սակայն, չեն համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրին, մասնավորապես չեն ներկայացվել ապրանքն արտադրողից կամ կնքողից ներկայացուցչից երաշխիքային նամակները: Փոխարենը ներկայացվել են համապատասխանության և փորձաքննության հավաստագրերից պատճեններ որոնցով չի երաշխավորվում ապրանքն արտադրողի կողմից Հանձնարարմանը

մատակարարվող և գնման առարկա հանդիսացող ապրանքների որակը: Մարտի 15-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ կրկին տրամադրվել 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ՝ մատակարարումները Պայմանագրով սահմանված բոլոր պայմաններին համապատասխանեցնելու համար, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստով:

Մարտի 20-ին Ձեր կողմից ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակներ ներկայացնելու փոխարեն ներկայացվել է գրություն այն մասին, որ ներկայացված փաստաթղթերը լիովին ապահովում են Պայմանագրի պահանջը, սակայն այլ ձևաչափով: Միաժամանակ խնդրել եք տրամադրել որևէ երաշխիքային նամակ, որի ձևաչափը «ցանկալի» է Համալսարանի համար, որպեսզի տրամադրեք դրանք պահանջված ձևաչափով:

Կրկին ընդառաջ գնալով Ձեր խնդրանքին պատասխանատու ստորաբաժանումը Ձեր պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել է պատասխան նամակ, որին կցվել է մեկ այլ գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի կատարման փուլում արտադրողի կողմից վաճառողին տրված երաշխիքային նամակի պատճեն՝ որպես երաշխիքային նամակի նմուշ:

Մինչև մարտի 25-ը այդպես էլ չստանալով պահանջված փաստաթղթերը և միաժամանակ, բացառելու համար Համալսարանի անբարյացակամ տրամադրվածությունը Ձեր կազմակերպության նկատմամբ՝ մարտի 26-ին Համալսարանը պաշտոնական հարցում է ուղարկել «Բայեր ԱԳ» ընկերության ԱՊՀ երկրներում բիզնեսի և համակարգման մենեջերին և «ԳԵ Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» ընկերության հայաստանյան պաշտոնական ներկայացուցչության ղեկավարին՝ խնդրելով տալ պարզաբանում «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանին տրամադրված փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև տալ հավաստում «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանին հանձնված դեղամիջոցների երաշխավորված լինելու վերաբերյալ: Ինչին ի պատասխան և՛ «Բայեր ԱԳ», և՛ «ԳԵ Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» կազմակերպությունները տրամադրել են միանման պատասխան.

1. ներկայացված փաստաթղթերը չեն հանդիսանում երաշխիքային նամակ, այլ իրենցից ներկայացնում են ապրանքի կոնկրետ խմբաքանակը գործարանից դուրս գալուց կատարվող հետազոտությունների արդյունքներ, որոնք երաշխավորում են արտադրված խմբաքանակի որակը, բայց չեն երաշխավորում դրա պահպանման և տեղափոխման պայմանները,

2. «Ագաստ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում «Բայեր ԱԳ» կամ «ԳԵ Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» ընկերությունների գործընկեր, հետևաբար ընկերությունները չեն կարող երաշխավորել մատակարարված ապրանքների որակը և անվտանգությունը:

Բացի այդ «Գե Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» ընկերության հայաստանյան պաշտոնական ներկայացուցչության ղեկավարը տրամադրել է Գե Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» գլխամասի գրություն, որում հստակ ասվում է, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված «16090606» սերիական համարով «Վիզիպաք» դեղամիջոցը արտադրվել և վավերացվել է Բուլղարական շուկայի համար և դրա փաթեթավորումը ու ներդիր-թերթիկը չեն համապատասխանում Հայաստանում գրանցման պայմաններին:

Միաժամանակ հայտնում ենք, որ 15.03.2024թ.-ին «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից համալսարանին հանձնման-ընդունման նպատակով մատակարարվել է նույն՝ «16090606» սերիական համարով «Վիզիպաք» դեղամիջոցը:

Վերոնշյալով, ինչպես նաև համալսարանին ներկայացված արտադրողների գրություններով հիմնավորվում է այն փաստը, որ «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված պահանջներին, իսկ ներկայացված փաստաթղթերը չեն հանդիսանում արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից Պատվիրատուին տրամադրված երաշխիքային նամակներ:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետով՝ Համալսարանը միակողմանի լուծում է 15.01.2024թ. կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» պայմանագիրը թիվ 72, 73, 74 չափաբաժինների մասով:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Միաժամանակ խնդրում ենք հինգօրյա ժամկետում հետ վերցնել 15.05.2024թ. հանձնման-ընդունման նպատակով Համալսարանին մատակարարված 20 հատ «Ուլտրավիստ 370» և 15 հատ «Վիզիպաք» դեղամիջոցները:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ